



Մ Ա Ս Ե Ա Յ Ա Ղ Ա Ի Ն Ի

Ա. Ի. Ե. Տ. Ա. Բ. Ե. Բ.


Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ե Ա Յ Յ

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն. Գ. Ի. Տ. Ե. Լ. Ի. Բ.

Թ. Ե. Մ. Ա. Կ. Ա. Ն. Տ. Ե. Ղ. Ե. Կ. Ո. Ի. Թ. Ի. Ի. Ն. Բ.

Վ. Ի. Հ. Ա. Կ. Ի. Ս. Հ. Ա. Յ. Ո. Յ. Ն. Ա. Ի. Զ. Ե. Ի. Ա. Ն. Ի. Ե. Ի. Պ. Ե. Ս. Ա. Բ. Ա. Պ. Ի. Ո. Յ.

Ա. Տ. Ե. Ն. Ա. Կ. Ա. Ն. Կ. Ա. Բ. Գ. Ա. Գ. Բ. Ո. Ի. Թ. Ի. Ի. Ն. Բ.



Բնութագրի 1. — Առաջնորդական
Ատենիս Ատենադպիր Ստեփանոս
Զաքարեան Սուրենեանց, որ նախ
Փոթիի մաքսատան մէջ պաշտօ-
նատէր էր, յառաջացաւ աստիճա-
նով ըստ կարգի, եւ առաջ որ
Քոլլեմսի Քիկիսրաքոր էր՝ անուա-
նեցաւ Կուպերնսի Սեփեար:

Փետր. 4. — Նախիջեւանի Զաւթըր գիւղի հա-
տարակուծեան խնդրագրոյն համեմատ, տե-
ղոյն Հոգեւոր Կառավարութեան առաջարկու-

Թեամբը այն գեղի սուրբ Համբարձման եկեղեցւոյն
երէցփոխան Դանիէլ Աբէլեանը կրկին անգամ ե-
րեք տարուան միջոցի համար որոշուեցաւ երէց-
փոխան՝ ըստ 1026 յօդ. Ա մասին ժԱ հատորոյ օ-
րինաց. իսկ անցեալ երեք տարուան մէջ ցուցու-
ցած ջերմեռանդ եւ հաւատարիմ ծառայութեա-
նը համար ընդունեցաւ Առաջնորդական Ատենիս
շնորհակալութիւնը:

— Նախիջեւանի Մեծ Սալայ գիւղի եկեղեցւոյն
երէցփոխան Մեղրոն Այտինեանը, իւր երեք տա-
րուան պաշտօնը հաւատարմութեամբ կատարե-

լով՝ արձակուեցաւ հանդերձ շնորհակալութեամբ Ատենիս . իսկ Նորա տեղը երէցփոխան որոշուեցաւ, եւ Առաջնորդական Ատենիս կարգադրութեամբը հաստատուեցաւ, նոյն հասարակութեան մէջէն Կարապետ Պապիեան :

Փետրուարի 25. — Եւպատորիոյ եկեղեցւոյն դպիր Գաբրիէլ Զաքարեան՝ ըստ խնդրոյ իւրում փոխադրուեցաւ իդպրութիւն եկեղեցւոյն Խարսու քաղաքի :

ՊԱՇՏՅՈՒՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՅՈՒՄՆ

Որես շոգենաւին պատահարը .

Կովկասու քաղաքներէն քանի մի պատուաւոր անձինք լսած լինելով անցեալ Գեկտեմբեր ամսոյն հին Որեստ անունով շոգենաւին հանդիպած ցաւալի պատահարը, զանազան նամակներով կ'ընդունէին մեզնէ հաւաստի տեղեկութիւն այն փորձանքին վրայ . եւ որովհետեւ ձախորդ լուրը շուտ կտարածուի եւ շատ մարդու եւս կրնայ տարապարտ սգոյ եւ տարակուսանաց պատճառ լինել, մանաւանդ այն օրերը ճանապարհորդ ունեցողներուն, վասն որոյ հարկաւոր համարեցանք այն փորձանքին հանգամանքը համառօտիս այս տեղ դնել, որպէս զի մեռնողներուն հետ նաեւ կենդանի մնացած մարդիկ մեռեալ չհամարուին, եւ եղած վնասը աւելի կամ պակաս չհասկըցուի :

Որեստ շոգենաւի Փորիէն դէպի Օտեսսա դառնալու առնելը Գեկտեմբերի առաջին օրերը, այս տարուան ծանր ձմեռան ցուրտ եղանակին մեծ ալիքութեան կ'անդիպէ . եւ որովհետեւ Կերչի նաւահանգիստը սառած էր, կ'հարկադրէ թեղոսիս գալու : Քաղաքիս նաւահանգստին քառասուն վերսք մնացած, ամսոյն հին զիշերը կարգէ դուրս սաստիկ մրրկախառն ձիւնի կրճուի, ու մառախուղ կ'պատէ ծովուն ու ծովեզերքին երեսը . եւ շոգենաւը որ արդէն ծովեզերքէն շատ հեռու չբալըր, չտիւնէ աւելի կ'մտնեայ ցամաքին, ու առաջին վրայ կ'նստի : Նաւապետը հարկ կ'ըմարի հրաման տալ ճանապարհորդներուն որ դուրս ելնեն, ու ցամաքով թեղոսիս եւ կամ մօտ գիւղերը երբան, ազատին այն մեծ փորձանքին : Այն լսելով՝ ողորմելի ճանապարհորդաց մեծ մասը եւ քանի մը նաւաստիք կ'ընեն նաւէն դուրս . բայց բուքի եւ մրրկի բռնուած՝ չգիտեն թէ ո՞ր կերբան, որովհետեւ ճանապարհները ձիւնով ծածկուած էին :

Եօթնասուն հոգւոյ չափ են եղեր ելնողները . բայց յետ սակաւուց մէկգնկ կորսնցընելով՝ կերբան դէպի այլ եւ այլ կողմեր, ու որ տեղ հինգ հոգի կ'ընկնին, որ տեղ տասը, որ տեղ քսան, եւ այնպէս ցիր ու ցան կ'ընին :

Երկրորդ օրը նաւապետը իմաց տուաւ թեղոսիս . այս տեղէն իսկոյն ամենայն պատրաստութեամբ դրկուեցան քրտանէն աւելի բալիւրներ (սանեա, գրգազ), որպէս զի նաւէն ցրուած կամ ապրիս անդին ընկած պաղած ճանապարհորդները առնուն բերեն : Այս ցաւալի լուրը երբ հրատարակուեցաւ . քաղաքիս մէջ, ամէն ազգէ մէկ մէկ երկերկու հոգի ինքնակամ յօժարութեամբ զնացին դէպի այն կողմը

որ փնտռեն փորձանքի եկած մարդիկը եւ գտնեն կամ մեռած կամ կենդանի : Նոցա հետ դրկուեցաւ նաեւ մեր Հայոց քահանայն Արժանապատիւ Տէր Մարտիրոս Շանվերտեան :

Մինչեւ որ այս քաղաքացիք այն կողմերը հասան, գիւղերուն հոգի են աւելի ձիւններուն մէջ ընկած, բայց կենդանի . սոքա իսկոյն քաղաքիս հիւանդանոցը բերուեցան, եւ կեսէն աւելին արդէն առողջացած են . քսան հոգւոյ չափ եւս ձորի մը մէջ գտնուեցաւ մեռած, զորս Ռուսաց գիւղացի քահանայի մը ձեռքով բազիկ կուտայ երեք փոսի մէջ, տեղ մը վեց՝ եւ տեղ մը եօթը հոգի խմբաբնի :

Քաղաքացիները երբ կ'պատրաստուին դատարկ ետ դառնալու, քանի մը գիւղացի թարարներ կուգան իմաց կուտան թէ ուրիշ մեռածներ եւս գտանք : Երբան տեսնեն որ տասնեութը հոգի ձորի մը մէջ իրարմէ մէկ մէկ քիչ հեռու սառած մեռեր են : Անոնցմէ չորս հոգին յայտնի չըլեայ լինելով, Հրեայք կ'առնուն կրեմեն . մէկը թեղոսիոյ բնակիչ Հայ-կարօղիկ թաղուս Միկոյիս անունով բարերարոյ երիտասարդը, զոր իւր ազգականը կ'առնու կրեմէ քաղաք . իսկ մնացածներուն մէջէն երեքը որովհետեւ Կովկասու բնակչաց մաքուր հագուստով էին, իբրեւ թիֆլիզեցի Հայեր կ'անձնեն մեր քահանային . այլք անծանօթ մնալով՝ կ'յանձնուին հոռու քահանային որ բաղէ, համարելով թէ անոնք օտմանեան տեղութեան միջի յունադասան ազգերն են :

Մեր քահանային քաղաք բերած երեք մարմինները ըստ օրինի լուանալն եւ պատնելն ետքը, միւս օրը Սրբազան Առաջնորդին կարգադրութեամբ պատարագով եւ կատարեալ եկեղեցական հանդիսով բաղուեցան սուրբ Գեորգայ եկեղեցւոյն զերեզմանատան մէջ : Հանդիսին ներկայ էր Սրբազան Վիճակաւոր Առաջնորդը, եւ մեր Հայագի բարեպաշտ ժողովրդէն շատ մարդիկ, որ այն ողորմելի տեսարանին վրայ կ'սկսեայք եւ արտասուօք կ'նայէին . տեսնելով երեք առոյգ եւ զեղեցկատեսիլ Հայ երիտասարդներ եւ կեղեցւոյ մէջ իրարու քով մէկ կարգ շարուած պառկած : Ո՞ր սիրտ չլացաւ նոցա վերայ՝ միտք բերելով մանաւանդ այն հանգուցելոց հեռաւոր բարեպաշտ ազգականներն ու ընտանիքը, որոց բերեաւ մտքէն անգամ չէր անցնէր այն միջոցին թէ ինչ վիճակի մէջ կ'գտնուին իրենց սիրելիքը : Բայց գիտնալով թէ Աստուծոյ առջեւ ամենեքեան կենդանիք են, յԱստուծոյ կ'մատրեին ննջեցելոց հոգոցը լուսաւորութիւն եւ ողորմութիւն, եւ նոցա խեղճ ազգականացն ու բարեկամացը մխիթարութիւն :

Այս երեք երիտասարդաց մեկուն քովէն ելաւ իւր առած շոգենաւին տոմսակը, յորում գրուած էր այսպէս . « Տէր Գաբրեանց՝ իրեն երկու ընկերներովը «: Ընկերներուն անունները չիշուած չէին . բայց այժմ Կորի քաղաքին Արժանապատիւ Ստեփաննոս Տէր-Ստեփանեան քահանային զբրած նամակէն ստոյգ կ'ըրեաի որ պէտք է լինին երեքն եւս Կորեցիք, այսինքն Տէր Գաբրեանց, Թիւրքեանց եւ Ալեքեանց . ուստի եթէ նոցա ազգականներն մէկը գալու լինի այս տեղ, նոցա հանդերձներն եւս կարող է ճանաչել, որ ամբողջ պահուած են քահանային քով : Ասոնցմէ մէկը բարձրահասակ էր, իսկ երկուքը միջանասակ :

Քանի մի օրէն յետոյ շոգենաւին մեզնէ ապրանքները թէ եւ սրբալցին բերին քաղաքիս շոգենաւուց Պաշտօնա-